# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 28.02.2020թ.կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով պետության կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան

«30» հուլիսի 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետև՝ Նախարարություն)՝ ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Վիրաբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 28.02.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին ծառայության մատուցման ժամկետըմշտական պահպանության գործերի արխիվացման ծառայությունների համար 3200 գործի, անձնակազմին վերաբերող գործերի արխիվացման ծառայությունների համար 250 գործի, իսկ պահպանության ոչ ենթակա գործերի արխիվացման ծառայությունների համար 2500 գործի համար երկարաձգել 30 օրացուցային օրով՝ 31.07.2020թ.-ի փոխարենսահմանելով 30.08.2020թ.:

### 2. Այլ պայմաններ

2.1.28.02.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով պետության կարիքների համար ՀՀ ֆինանսների նախարարության արխիվացմանծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անքաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀֆինանսներինախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

------------------------------ Վ. Հարությունյան

գրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
ք. Երևան, Հր. Քոչար 5/2
Հ/Հ՝ 900018002080
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 00078217
Տնօրեն՝

------------------------------ Ա. Վիրաբյան

ություն/
Կ.Տ